ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. փետրվարի 7 թիվ 14 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշման պահանջներով և համաձայն <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2012 թվականի հիմնական միջոցառումների պլանի>> 11.2.2 կետի ***կարգադրում եմ.***

1. 2012 թվականի մարտի 5-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի վարչական շենքում անցկացնել շտաբային ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով:
2. Շտաբային ուսումնավարժությանը ընդգրկել մարզպետարանի ղեկավար կազմին, արտակարգ իրավիճակներում գործող հանձնաժողովին և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը:
3. Ուսումնավարժության ղեկավար է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետը:
4. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ համաձայն հավելվածի:
5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝ կազմել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ներկայացնել ուսումնավարժության ղեկավարին:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ. փետրվարի 7-ի թիվ 14-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1.Շ.Շամիրյան -ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ, շտաբի պետ

2.Ս.Հովսեփյան -ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, շտաբի պետի տեղակալ

3.Ա.Հակոբյան -ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փրկարարական ծառայության փոխգնդապետ, շտաբի անդամ

4.Հ.Դարբինյան - ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, օպերատիվ բաժնի պետ , փրկարարական ծառայության փոխգնդապետ, շտաբի անդամ

5.Հ.Կարապետյան - ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փրկարարական ծառայության մայոր, շտաբի անդամ

6.Վ.Հարությունյան - ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության օպերատիվ բաժնի հրահանգիչ, փրկարարական ծառայության ավագ լեյտենանտ, շտաբի անդամ

7.Է.Շամիրյան - ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության օպերատիվ բաժնի հրահանգիչ, փրկարարական ծառայության ավագ լեյտենանտ, շտաբի անդամ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ